ՀՏԴ 376 : 316.728

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՆՁԱՆՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆԻ ՇՈՒՐՋ

Ե. Հ. Գևորգյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր

Հանգուցային բառեր և արտահայտություններ. չտեսնող, ներառում, ժեստիկուլյացիա, տիֆլոմանկավարժ, ուսուցում

Հաշմանդամներին հասարակության մեջ ներառելու գործընթացի բաղադրիչները հանրահայտ են՝ կրթություն հանրային (զանգվածային) դպրոցում, աշխատանք ամենքի հետ զանգվածային հաստատություններում կամ հիմնարկություններում, ընտանիքի կազմում, մշտական ներկայություն հասարակության մեջ՝ ամենօրյա շփումներով և անցուդարձի մասնակցությամբ: Նշված բաղադրիչներն իրականացնելու համար ստեղծվում են համապատասխան կենսապայմաններ՝ մեկ վերջնական նպատակով՝ ձգտել հաշմանդամներին առավելագույնս մերձեցնելու հասարակությանը, որպեսզի նա ոչնչով կամ գրեթե ոչնչով չզանազանվի իր շրջապատի մյուս անհատներից: Ասվածը վերաբերում է հաշմանդամ մարդկանց ընդհանրապես:

Սակայն չտեսնողների առնչությամբ կա գործելակերպի մի այլ պայման ևս, ներառման մի այլ բաղադրիչ, առանց որի հասարակության լիարժեք անդամ լինելը ինչ-որ տեղ թերի կմնա, և անհատը կզանազանվի իրեն շրջապատող մյուս անհատներից:

Հավաք է. աշխույժ խոսակցություն ու ժամանց: Մասնակիցներն արձագանքում են շրջապատում կատարվածին իրենց վարքով ու շարժուձևով: Ներկաներից մեկը նույնպես մերված է ընդհանուր մթնոլորտին: Աշխույժ զրուցում է, բայց... մշտապես կենտրոնացած է, մեծ մասամբ հակված է մի կողմի վրա՝ կարծես հայացքով սևեռված մեկի դեմքին կամ մի կետի. անբնական, անսովոր է մարմնի դիրքը: Դեմքի մկաններն անհրաժեշտության դեպքում եռանդուն չեն շարժվում, դիմաշարժի ակնհայտ պակաս կա: Ձեռքերն անշարժ դրված են սեղանին կամ ծնկներին, չկա ձեռնածություն (մանիպուլյացիա): Այսպիսի մարդը վարքով, մասնավորապես՝ շարժուձևով զանազանվում է մյուսներից: Հարց ու պատասխանին արձագանքում է միայն խոսքով, շուրջը կատարվածին՝ առաջին հերթին ձայնարկություններով կամ ժպիտով ու ծիծաղով: Շարժուձևն, իբրև արձագանքելու, արտահայտվելու

միջոց, ակնհայտորեն թերի է: Այո, այսպիսի անհատը զանազանվում է ուրիշներից: Պատճառն այն է, որ նա չի շարժասում (ժեստիկուլյացիայի չի դիմում): Նա վատ գիտե շարժումային լեզուն, որն իր ժողովրդի երկրորդ մայրենի լեզուն է: Խոսքը չի վերաբերում խուլուհամրերի ժեստերի լեզվին, որը հասարակության մի խավի նեղ ոլորտային շարժալեզուն է, այլ ներկա դեպքում՝ յուրաքանչյուր հայի, մեր բոլորի ամենօրյա գործածության շարժումային լեզվին, որին դիմում ենք հնչյունային լեզվին համընթաց կամ առանց վերջինիս՝ որպես հաղորդակցական առանձին միջոցի: Հանրահայտ է, որ մենք՝ հայերս, տաքարյուն ժողովուրդ ենք, շարժասության (ժեստիկուլյացիա) առումով նման ենք իտալացիներին և մեկ ժամ տևող զրույցի ընթացքում շարժասում ենք ավելի քան 120 անգամ: Չտեսնող հայը նմանվում է էստոնացու կամ ֆիննի, որոնք մեկ ժամում շարժասում են մեկ անգամ: Աչքի զարնող տարբերություն. բացակայում են շարժումային լեզվի դրսևորման միջոցները: Համառոտակի ներկայացնենք այդ միջոցները, որոնք հինգն են՝ բերելով երեքական օրինակ:

Շարժանք (ժեստ). *ձեռքով մոտ կանչել, գլուխն օրորել,* (հանդիմանել կամ վշտացնել), *մատով սպառնալ*: **Մարմնաշարժանք**. *ոտքից ոտք ճոճվել* (անհարմար վիճակում լինել), *թռչկոտել* (հրճվել), *նստած տեղից վեր կենալ* (հարգանք կամ զարմանք արտահայտել): **Դիմախաղ**. *ունքերը կիտել* (մռայլվել), *շրթունքներն ուռեցնել* (խռովել), *աչքով անել* (ծածուկ մի բան հասկացնել): **Կեցվածք**. *ոտքը ոտքի վրա գցած նստել* (անփույթ, հանգիստ վիճակում լինել), *ձեռքը ճակատին դնել* (մտորել), *գլուխը ձեռքերի մեջ առնել* (վշտացած կամ մտախոհ լինել): **Քայլվաք**. *թաթերի վրա քայլել* (զգուշավոր լինել), *հետ-հետ գնալ* (զարմանալ կամ երկյուղել), ինքնավստահ քայլել:[1]

Այժմ մեզ անհրաժեշտ է զուգահեռ անցկացնել խուլուհամրի և չտեսնողի միջև: Խուլուհամրը չի խոսում՝ ունենալով հանդերձ առողջ արտասանական կառույց: Նա ի ծնե չի լսում հնչյունային լեզուն, անհաղորդ է մնում, ուստի այն չի յուրացնում: Իսկ հնչյունային լեզուն հասարակական երևույթ է: Ի ծնե կամ վաղ մանկությունից չտեսնող մարդն անհաղորդ է մնում շարժումային լեզվին, չի ժառանգում նախորդ սերնդի շարժասությունը (ժեստիկուլյացիա), ուստի, ինքն էլ ձեռք չի բերում շարժասելու ավանդույթը: Նա միայն ժառանգում է, այն էլ՝ ոչ ամբողջովին, ոչ պայմանական՝ հուզական շարժույթները (կինեմա - հանրորեն ընդունված իմաստակիր շարժում), որոնք ոչ կամածին են՝ բնազդական, կենսաբանորեն ձեռք բերված նախորդ սերունդների կողմից, ինչպիսիք են՝ *ծիծաղել, լաց լինել, ամբողջ մարմնով դողալ* (խորապես հուզվել), *շրթունքները կծոտել* (ցավ զգալ), *տեղից վեր թռչել* (վախենալ): Ընդ որում, այդպիսիք ևս անկանոնություններ են ունենում կատարման ընդունված տեխնիկայից, լինում են որոշ շեղումներ: Օրինակ, ժպտալիս

1 Տե՛ս Ե. Գևորգյան, Շարժումների լեզու (Ներածություն), ԵՊՀ հրատ., Եր., 1988թ., էջ 13-22:

կամ ծիծաղելիս՝ շրթունքների անսովոր դիրք: Պայմանական շարժույթների վերաբերյալ, որոնք կազմում են շարժումային լեզվի մեծագույն մասը, չտեսնողը տեղեկանում է հնչյունային լեզվին տիրապետելուց շատ ավելի ուշ՝ նախ կենդանի խոսքից, ապա գրականությունից՝ նկարագրությունների միջոցով: Բայց նա չի ընկալում, որ իր շրջապատում դրանք ամենօրյա գործածություն ունեն, և քանի որ ինքն էլ դեռևս շարժասելու ավանդույթ չունի, ուստի ընդունում է միայն շարժումային լեզվի գոյությունը՝ որպես այդպիսին: Ճիշտ է, սակայն, որ գիտակցական կյանքի տարիներին ինքնազարգացմամբ զբաղվող չտեսնողը սեփական նախաձեռնությամբ յուրացնում ու գործածության մեջ է դնում որոշ թվով շարժույթներ՝ թեև կատարման թերություններով: Մյուս կողմից իր դերն ունի կյանքը, մասնավորապես՝ պատշաճ վարվեցողությունը, և հաղորդակցվելիս մշտական են դառնում այլևայլ **շարժանքներ** (ժեստ). *ձեռքսեղմումով բարևել, ձեռքը կամ մատը բարձրացնել* (խոսք խնդրել, քվեարկել), *ծափահարել,* **մարմնաշարժանքներ**. *նստած տեղից վեր կենալ* (հարգանք արտահայտել), *խոնարհվել* (հարգել կամ շնորհակալություն հայտնել)... Պակաս մատչելի են մնում դիմաշարժերն ու քայլվածքի ձևերը:

Մինչև տասը տարեկանը տեսողությունը կորցրած երեխան (թեև ոչ լիարժեք տիրապետելով), անհամեմատ հաճախ է շարժասում, որովհետև հասցրած է լինում ժառանգել խոսող մարդու շարժումային լեզուն: Սակայն այս դեպքում էլ, տարիքով պայմանավորված, նախ յուրացրած չի լինում շարժույթների ողջ պաշարը և ապա ներազդում է հետ վարժվելու գործոնը:

Այսպես, ուրեմն, համընդհանուր շարժումային լեզվի գործունեության աչքի զարնող պակասն իրեն զգալ է տալիս:

Շարժումներով արտահայտվելը հատուկ է միայն մարդուն, ուստի, չտեսնող անհատի մեջ ձևավորվում և ամրակայվում են ավելորդ՝ հանրային գործածությունից շեղված շարժումներ՝ հաճախակի ցնցվել, մարմինը շարունակ օրորել, տևականորեն հակվել մի կողմի վրա, ծնոտը հաճախակի ու երկար հպել կրծքին, ծուռ ժպտալ, գլուխը թեք պահել դեպի աջ կամ ձախ ուսը և այլն: Նման շարժույթներով ևս արտահայտվում է ներքին հոգեվիճակ, անհարմարվածություն, սեփական ասելիքի ընդգծում և վերաբերմունք:

Արդ, ո՞րն է տիֆլոմանկավարժների խնդիրը.

ա) ուսուցանել թույլ տեսնող կամ չտեսնող մարդուն հայոց շարժումային լեզուն,

բ) վերացնել տեսողության խանգարում ունեցող մարդու շեղումնային, մերժելի շարժասությունը:

Ուսուցումն անհրաժեշտ է սկսել նախադպրոցական տարիքից, ինչը կդյուրացնի աշխատանքը, ինչպես նաև կկանխի խոցելի շարժասության առաջացումը: Ի դեպ, հասարակության լիարժեք անդամի ձևավորման և ներառման համար չտեսնող երեխաներին չափազանց անհրաժեշտ է մանկապարտեզ հաճախել: Որքան ուշ սկսվի շարժումային լեզվի ուսուցումը, այնքան ավելի դժվար կլինի

այն իրականացնել: Շատ մեծ տարիքում, ասենք 50 տարեկանից հետո, այդ կարողության ձևավորումը այլևս անհնարին է: Տարիների ընթացքում նվազում է դեմքի մկանների շարժունությունը, շարժումների ճկունությունը՝ ընդհանրապես: Արգելակող հանգամանք է նաև ակտիվորեն շարժասելուն անսովոր լինելը և հաղորդակցման նոր կենսաձևի՝ շարժույթների ամենօրյա մշտական գործածությունը, որն այլևս թվում է խորթ, նույնիսկ՝ ոչ ցանկալի: Ցանկության դեպքում, երբ չտեսնողը բառային նկարագրությունների միջոցով ծանոթանում է շարժույթներին, միևնույնն է՝ կատարման տեխնիկան սովորաբար չի յուրացնում:

Տիֆլոմանկավարժները փորձից գիտեն, որ մարդն ի ծնե կամ վաղ մանկությունից տեսողությունը կորցնելու դեպքում բացատրությունից հետո էլ չի կարողանում, ասենք, *ունքերն իրար բերել* կամ *կիպել, շրթունքներն ուռեցնել* (խռովել), աչքերն անվնաս լինելու պարագայում չի կարողանում *աչքով անել, աչքերը ոլորել* կամ անախորժությունից դեմքը ծամածռել, հանրության կողմից ընդունված կերպով *քիթը կնճռոտել, կոտրատվել* (սեթևեթել): Կատարման առումով անծանոթ են մնում քայլվածքի շատ ձևեր (վեհորեն քայլել, երկյուղած քայլել, թռչկոտող քայլվածք)...

Շարժումային լեզվի ուսուցումը հարկ է սկսել ընտանիքում՝ նախքան երեխայի մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը: Դպրոցում, ինչ խոսք, այն առաջին հերթին շարունակում, իսկ եթե ընտանիքում աչքաթող է արվել (մեծ մասամբ այդպես էլ լինում է), սկսում են դաստիարակներն ու ուսուցիչները: Մեծ՝ ոչ դպրոցահասակ, մարդկանց ուսուցումը կատարվում է վերականգնողական կենտրոններում, մշակույթի տների թատերական ու պարի խմբակներում կամ տիֆլոմանկավարժների (կուրավարժների), համապատասխան գիտակ մասնագետների հետ անհատական աշխատանքի միջոցով (նշված ոլորտի ուսումնասիրողներից մեկն է տողերիս հեղինակը):

Պահանջվում է հետևողական երկարատև աշխատանք:

Ոչ ոլորտային, միայն համաժողովրդական գործածության շարժույթները հազարից ավելին են: Դրանք անհրաժեշտ է նախ հասկանալ, ապա՝ յուրացնել կատարման տեխնիկան: Ավելի համառ ջանքեր է պահանջվում մշտական գործածության մեջ դնելը: Հարկ է մեկ առ մեկ մանրամասն պարզաբանել յուրաքանչյուր **շարժանքի** (ժեստ), **մարմնաշարժանքի, դիմախաղի, կեցվածքի, քայլվածքի** կատարման տեխնիկան, իմաստը, տարբերակները, մեղմության ու սաստկության աստիճանները՝ իրենց նրբիմաստներով: Աշխատանքի բերումով՝ տողերիս հեղինակն անձամբ համոզվել է գործի մանրակրկիտ, նրբերանգներով լի լինելու մեջ:

Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարանի[2] կազմության ընթացքում ակնհայտ դարձավ, որ չտեսնող մարդուն շարժույթների մի մասն անծանոթ է, քանի որ

2 Տե՛ս Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2003թ.:

դրանց նկարագրությունը կենդանի խոսքում նա չի լսել կամ գրականության մեջ չի կարդացել. Ձեռքի շարժումով միաժամանակ զարմանք ու դժգոհություն արտահայտել (ցուցամատն ու բթամատը բաց են, մյուս մատները ծալած. դաստակի կտրուկ շարժումով ափը ներքևից ուղղվում է դեպի վեր): Ձեռքով հարցնել (ձեռքը, կիսափակ մատներով ափը դեպի վեր բարձրացնել մինչև արմունկի մակարդակին, թեթևակի տարուբերել աջ ու ձախ): Շարժույթների մյուս մասը ծանոթ է մասնակի՝ շարժասական թերություններով: Շփոթ է նկատվում գլխով «ոչ ասել» ու գլուխն հանդիմանաբար օրորել շարժանքի միջև, կամ ուսերը վեր թոթվել և ուսերը թափահարել առաջ ու հետ շարժանքների միջև:

Շարժույթների մի երրորդ մասը, թեև տեսականորեն ծանոթ է թե՛ կատարման տեխնիկայով, թե՛ իմաստով, սակայն դրանց գործածության պահանջը չի զգացվել: Ասպես կարելի է խոսել այլևայլ շարժույթների բացատրության շարժասական ճշտումների մասին: Մատը դնել շրթունքներին (լռեցնել, շ.՛շ.՛շ.,), բայց ցուցամատն ինչ դիրքով դնել կամ մատի մինչև որ մասը: Մատով սպառնալ. դեպի ուր է ուղղված ափը, որ ուղղությամբ է շարժվում ձեռքը, արդյոք դաստակից, թե՞ նախաբազուկը նույնպես: Ինչպե՞ս ձեռքով համաձայնության նշան անել, աչքերով բարևել, ինչպե՞ս ցույց տալ ճանապարհի նեղ լինելը կամ՝ ձուկ, ոսկեդրամ, մկրատ և այլն: Բացատրություններին համընթաց տարիների աշխատանք ու հսկողություն է պահանջվում, որպեսզի շարժասությունը չտեսնողի կյանքի ամենօրյա մասը դառնա:

Ինչպես ակտիվ շարժունության, այնպես էլ ակտիվ շարժասության նախապայման են մարզական պարապմունքները, պարի ուսուցումը: Տարիներ առաջ հատուկ կրթության մասնագետ-մանկավարժ պրոֆեսոր Ռ. Ազարյանը Հայաստանի կույրերի միավորումում ղեկավարում էր թեթև աթլետիկայի խմբակը (վազք, թռիչք-երկարություն): Չտեսնողների գիշերօթիկ դպրոցում ժամանակին Մագդա Ներսիսյանը պար էր դասավանդում: ՀԿՄ մշակույթի տունը, իսկ վերջերս՝ «Փյունիկ» կազմակերպությունն անց էին կացնում ռոլինգբոլի և գոլբոլի պարապմունքներ ու մրցումներ: Տողերիս հեղինակը մասնակցել է նշված պարապմունքներին և իրեն իրավունք է վերապահում վկայելու, որ դրանք խիստ օգտակար են, իսկ արդյունքները՝ ավելի քան գոհացուցիչ: Մարզախաղերի նշանակությունը չտեսնողների շարժունության գործում, ըստ էության, հայ մանկավարժության մեջ նորություն չէ. Այն տեսականորեն մշակված է:[3] Ընդ որում, պրոֆեսոր Ռ. Ազարյանը նվիրված չտեսնողներին ճիշտ քայլվածքին վարժեցնելու մեթոդիկայի հեղինակն է:[4] «Աթլետիկական վարժությունների և մեթոդների բազմազանությունը, դրանց կիրառումը

3 Տե՛ս Р. Н. Азарян, Физическое воспитание слепых и слабовидящих в режиме учебного дня, изд. Всероссийское общество слепых (ВОС), Москва, 1987 г.

4 Տե՛ս Р. Н. Азарян, Обучение слепых и слабовидящих детей правильной ходьбе, изд. ВОС, Москва, 1989 г.

հնարավորություն է տալիս նպատակաուղղված կերպով ներգործելու տեսողության խանգարումով երեխաների կենսական կարևոր օրգանների և համակարգերի վրա (նյարդային, մկանային, սրտանոթային, շնչառական), նպաստում է երեխաների ֆիզիկական զարգացման թերությունների շտկմանը և արդյունավետ շարժումների ձևավորմանը»:[5] Համաձայն լինելով այս տողերի հեղինակի մտքին, ինչպես նաև Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Ս. Մուրադյանի այն դրույթին, թե շարժախաղերը փոխհատուցում են կույր և թույլ տեսնող երեխաների արատները[6]՝ հարկ է ավելացնել հետևյալը. վերը նշված և հիմնահարցի հետ առնչված այլ հեղինակների՝ չտեսնող երեխաների շարժունությունը զարգացնող քննության առած միջոցներն ու մեթոդները նպաստում են նաև շարժումային լեզվի յուրացմանը, մարմնի անհրաժեշտ դիրքերին վարժվելուն. մարմնի ճկունությունն օգնում է շարժանքների, մարմնաշարժանքների, քայլվածքի ձևերի տիրապետմանը:

Ինչ վերաբերում է դիմախաղին, ապա այս առնչությամբ մարմնի ճկունությանը զուգընթաց՝ տիֆլոմանկավարժը (կուրավարժը) պետք է զարգացնի չտեսնողի շոշափելիքը՝ ընկալելու համար փոքրածավալ ու նուրբ մկանային շարժումները՝ դրանք ցուցադրելով իր իսկ կամ այլ մեկի (տեսնող աշակերտի) դեմքի վրա: Միաժամանակ հարկ է զարգացնել չտեսնողի դեմքի մկանային շարժողունակությունը՝ վարժությունների, դիմաշարժային փորձերի և համապատասխան խաղերի միջոցով (կապված շրթունքների, ունքերի, քթի, այտերի հետ):

Արժևորելով ներառական կրթության մեջ ու հասարակական կյանքում շարժասության (ժեստիկուլյացիա) նշանակությունը՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, տիֆլոմանկավարժություն բաժնում 2013թ. սեպտեմբերից ուսումնական պլանում ներդրվել է «Շարժումային լեզու» առարկան, որի նպատակն է ուսուցչական ու միաժամանակ վերականգնողական աշխատանքում նորահաս կադրերին տալ ևս մեկ ներգործուն միջոց: Հարկ է ընդգծել, որ այս առարկան նույն չափով անհրաժեշտ է հատուկ կրթության ֆակուլտետի մյուս բաժիններում ևս:

Սուրդոմանկավարժները արդեն իսկ սովորում են համրերի ժեստերի լեզուն, որը, սակայն, հասարակության մի խավին է վերաբերում. համաժողովրդական շարժումային լեզվի հարցը բաց է մնում: Լոգոպեդները, շտկողական աշխատանքի

5 Ս.Ս. Ղուկասյան, Վ. Մ. Մամաջանյան, Տեսողության խանգարումով երեխաների աթլետիկական վարժությունները՝ որպես նրանց շարժողական ոլորտի խանգարումների շտկման միջոց, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» ժողովածու, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

6 Ս. Վ. Մուրադյան, Տեսողական խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող շարժախաղերը՝ որպես նրանց արատները փոխհատուցող գործընթացի իրականացման պայման, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

առաջին շաբաթներին հոգեբանամանկավարժական նկատառումներով մի կողմ թողնելով հնչյունային լեզուն, խոսքի խանգարում ունեցողների հետ հաղորդակցվում են շարժումային լեզվով: Վերջինս անհրաժեշտ է նաև օլիգոֆրենոմանկավարժներին, որովհետև որոշակի իրադրություններում այն ավելի ներգործուն է լինում, քան հնչյունային լեզուն: Մեր ժողովրդի երկրորդ՝ շարժումային լեզվին տիրապետելուց զատ բոլոր բաժինների ուսանողությունը կստանա նաև տեսական գիտելիքներ շարժումային լեզվի ծագման մասին, կիմանան դրա դրսևորման միջոցները, նմանությունը և տարբերությունը միջազգային շարժույթներից և ամենագլխավորը՝ կիրազեկվեն թե ինչ պայմաններում է գործադրվում այն: Ճիշտ նույն կերպ բանասերները, որևէ լեզու սովորելուն զուգընթաց՝ ուսումնասիրում են նաև ընդհանուր լեզվաբանություն:

Եվ այսպես, շարժումային լեզվի իմացությունը, ամենօրյա գործածությունը, չտեսնողի ներառական գործընթացի կարևոր բաղադրիչներից է: Երկրորդ մայրենի լեզվին չտիրապետելը նվազեցնում է նրա շփումը շրջապատի մարդկանց հետ. դեմքը լինում է անարտահայտիչ, աչքի են զարնում մյուս կարգի շարժույթների պակասը, ինչը, անհատի՝ հասարակության լիարժեք անդամներից տարբերվելու պատճառ է դառնում: Վերադառնալով խուլուհամրի ու չտեսնողի համեմատությանը հարկ՝ է նշել նաև հետևյալը՝ առաջինն իր կրթական բարձր կետին է հասած լինում, երբ կարողանում է խոսել ու դիմացինի շրթունքների շարժումից կարդալ բանավոր խոսքը, ինչը երկար տարիների համառ աշխատանքի արդյունք է: Ոչ մի համեմատություն չի կարող լինել խուլուհամրերի խոսելու ունակություն ձեռք բերելու, անհաղթահարելի թվացող դժվարությունների և չտեսնողի կողմից շարժումային լեզուն յուրացնելու ու գործածելու ջանքերի միջև: Վերջինը նույնպես տևական ժամանակի խնդիր է, բայց հենց սկզբից՝ հեշտ բացատրելի ու չտեսնողի համար համեմատաբար մատչելի: Այսուհանդերձ, խոսել կարողանալու մակարդակին հասնելը մտցված է խուլուհամրերի դպրոցական ծրագրերում, մինչդեռ չտեսնող երեխային շարժումային լեզուն ուսուցանելը՝ ոչ: Պատճառը, թերևս, այն տարածված սխալ կարծիքն է, թե ինքնուրույն էլ հնարավոր է տիրապետել խնդրո առարկա լեզվին: Բայց ավելի իրական ու համոզիչն այն է, որ չեն եղել համապատասխան տիֆլոմանկավարժներ, որոնք տիրապետելով նյութին՝ ուսուցանեին երեխաներին, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրածներին: Այսպես, թե այնպես, գործի սկիզբը դրված է. Երևանի պետական մանկավարժական համալսարանում շարժումային լեզուն դասավանդվում է:

Շրջանավարտներ տալուն, բնականաբար, կհաջորդի գործնական, վերականգնողական ու մանկավարժական աշխատանքի մի նոր ուղղություն ևս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ե. Գևորգյան, Շարժումների լեզու (Ներածություն), ԵՊՀ հրատ., Եր., 1988:

2. Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2003:

3. Ս.Ս. Ղուկասյան, Վ. Մ. Մամաջանյան, Տեսողության խանգարումով երեխաների աթլետիկական վարժությունները՝ որպես նրանց շարժողական ոլորտի խանգարումների շտկման միջոց, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» ժողովածու, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

4. Մուրադյան Ս.Վ., Տեսողական խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող շարժախաղերը՝ որպես նրանց արատները փոխհատուցող գործընթացի իրականացման պայման, Զանգակ-97, Եր., 2008, թիվ 7:

5. Азарян Р.Н., Физическое воспитанние слепых и слабовидящих в режиме учебного дня, изд. Всероссийское общество слепых, Москва, 1987 г.

6. Азарян Р. Н., Обучение слепых и слабовидящих детей к правильной ходьбе, изд. 1989г.

7. Critchley M., The Language of Gesture, London, 1951 y.

РЕЗЮМЕ

К ВОПРОСУ ОБ УСЛОВИЯХ ИНТЕГРАЦИИ В ОБЩЕСТВО ЛЮДЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ

Е. У. Геворкян

профессор кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор филологических наук

Для интеграции в общество необходимо, чтобы незрячий освоил и пользовался жестикуляцией, свойственной своему народу. Армяне, как и итальянцы в течение одночасовых бесед жестикулируем более чем 120 раз. Человек с нарушением зрения также должен пользоваться губами, телодвижениями, мимикой лица, походкой. В противном случае он будет отличаться от окружающих своим неподвижным лицом (Бестер Китон), недостаточностью телодвижений и его интеграция в общество будет неполноценной.

SUMMARY

CONDITIONS OF INTEGRATIONS INTO SOCIETY OF PEOPLE WITH VISUALLY IMPARIED

E.H. Gevorgyan

Doctor of Philological Sciences, Professor of the Chair of Special Pedagogy and Psychology Khacatur Abovyan State Pedagogical University

For integration into society it is necessary that visually impaired person would use the gesticulation peculiar to the people. We, Armenians, as well as Italians during the 1 hour of conversation gesticulate more than 120 times.

The person with visual impairments also has to use lips, bodymovements, gestures and a facial expression, article and gait. Otherwise it will differ from people around the motionless person (Bester Keaton), insufficiency of gestures and his integration in society will be defective.